Իմացեալ թագուհւոյն զխոժոռիլն Թովմաճանին ասէ ցիշխանն յանդիմանելով. Դուք ոչ ճանաչելով զակունն զայդպիսի զռեհկական բանս խօսելով՝ դուք զձեզ խայտառակեցիք։ Եւ խոստովան լինելով թագուհին ասէ ցԹովմաճանն։ Բարձ զակունդ զայդոսիկ և պահեա՛ առ քեզ զի յիրաւի ի թագաւորութեան մերում ոչ գործածեն զայսպիսի ակունս և վասն այն եւս ոչ ճանաչեն։ Բայց ես զքեզ ոչ վասն այդորիկ իրաց մեծ ոմն առնելոց եմ, այլ պաշտօնիւ. և դու գնա՛ նիստ հանդարտ ի տեղւոջ քում։

Եւ մինչեւ ցայսվայր այն կարմիր եաղութ մատանին դեռ ի մատն թոռան իւրոյ թագաւորին էր. վասն որոյ թագուհին ասէ ցԹոռն. Հան զմատանին և տո՛ւր Թովմաճանին։ Իսկ Թովմաճանն կեղծաւորութեամբ ասէր՝ թէ Որովհետեւ եմուտ ի մատն թագաւորի՝ չէ արժան մեզ այսուհետեւ ընդունել զայն։ Իսկ թագուհին հանեալ ետ Թովմաճանին և ասէ. Եկեսցէ ժամանակ զի յայնժամ առից զսա միայն. որպէս յետոյ ի ժամանակի չուելոյ Թովմաճանին՝ էառ զայն վասն թոռանն։

Եւ ելեալ գնաց ի խուց իւր տխուր Թովմաճանն ընդ վերակացուին իւրոյ. և ետ կոչել զԱյդոյ Բիջոն և ասէ ցնա. Ո՛վ եղբայր, ընդէ՞ր խաբէութեամբ բերեր ասա ասելովդ թէ ակնեղէնքն քոյ զբեռն մի ուղտու ոսկի բերէ ի քաքաքն մեր, զոր ամենեւին ոչ ճանաչեն և ոչ գործածեն. ա՞յս էր մի՞ արդեօք քո երդմամբ բարեկամութիւնն. տե՛ս ո՛րպէս Խթեկէ թագուհին յայտնապէս խոստովանեցաւ թէ յայս քաղաքս զայսպիսի ակնեղէն ոչ գործածեն։ Եւ նա ասէ. Զի թէ ես ոչ ասէի այնպէս՝ դու ոչ զայիր ընդ իս. եւս ես ոչ վասն ակնեղինացդ զքեզ հրաւիրեցի, այլ զի զքեզ բարի մարդ ճանաչեցի, բերի զքեզ որ մեր քաղաքիս բարութեանն վայելեցես, որպէս և թագուհին մեր եւս սիրեաց զքեզ և մեծ պաշտօն տալով մեծ ոմն առնելոց է զքեզ. և դու զինչս քո պահեա, և առանց ինչ վաճառուց քոց յուսամ թէ իրաւի մեծ ոմն լինելոց ես։ Եւ Թովմաճանն փոքր ինչ զովացեալ և յուսադրեալ ի բանից Խթեկէին և Այդոյ Բիջոյին՝ սկսաւ հարցանել ցնա. Որեմն ո՞ւմ այլ ումեք պիտոյ զընծայս տալ. և նա ասէ. Ճզմաթի Շէթէին՝ որ է ազգական և սիրականն թագուհւոյն։ Այլեւս զինակիր թագաւորի Այդու Պարամպարիա զինակրին։ Եւ խեղճ Թովմաճանն առաքեաց 150 ղրշ. ընծայ Ճզմաթի Շէթէին, և Այդու Պարամպարիա զինակրին առաքեաց 70 ղրշի. ընծայ. զայս ամենայն առաքեաց ընդ Այդոյ Բիջոյին։

Եւ յետ երից աւուրց՝ թմբկօք և երգովք և բազմութեամբ անձանց բերին զընծայ ի թագաւորէն և ի թագուհիէն առ Թովմաճանն. և ընդ առաջ հանեն զնա. և նա եւս ուրախութեամբ յառաջ վազէ ընդունիլ զընծայն, պատկերակերպելով ի միտս թէ գոնեա լինելոց է 5–6 հազար դուրուշի ընծայ։

Ո՛վ մեծի զժբախտութեան Թովմաճանի և գռեհկութեանն հապէշ թագաւորին։ Քանզի յորժամ մուծին ի ներքս զմեծ զընծայսն զայնոսիկ՝ այն ինչ էր նորատեսիլ իմն. զի էր մի կով, մի գառն, 10 հաւ, 50 հաց, և մի կուժ՝ այսինքն տէսթի պոզայ և այլ ո՛չ ինչ գոյր։

Յայնժամ ասէ Թովմաճանն՝ իւր վերակացու եղեալ իշխանին. Ա՞յս է թմբկօք եկեալ ընծայ թագաւորին։ Եւ իշխանն իսկոյն իմացաւ զխոժոռիլն Թովմաճանին, և հեգնական կերպիւ ծաղր առնելն, վասն որոյ ասէ. Այս օրըստօրական ապրուստ քո։ Ասէ Թովմաճանն. Ինձ բաւական է մին գառ և 2 հաւ յաւուրն, և զայլս զինչ արարից. ես աղքատ մարդ զոլով 1400 ղրշի. զընծայս ետու, և յուսայի ի տեղի նորա եռապատիկ և քառապատիկ ընդունել ըստ սովորութեան քաղաքին մերոյ ի թագաւորէն և ոչ երբէք զայսպիսի ինչ կարծէի։ Եւ ի խորս յուսահատութեան անկեալ վարանէր Թովմաճանն։

Իսկ վերակացու իշխանն գնացեալ առ թագուհին պատմեալ է նմա զամենայն։ Եւ նա կոչէ զԱյդոյ Բիջոն և ասէ թէ՝ Երթ և մխիթարեա՛ զքո Թովմաճանն և